ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «15» հունվարի 2019թ.

ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսեսյանի (այսուհետ՝ ոստիկանություն), որը գործում է ՀՀ ոստիկանության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահի առաջին տեղակալ Ա. Մկրտչյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպության կողմից «Պետության կողմից տրամադրվող դրամաշնորհի օգտագործման» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր)] իրականացման նպատակով,

որի խնդիրներն են՝

Հայաստանի Հանրապետության ոստիկանության, նրա ստորաբաժանումների և մյուս իրավապահ մարմինների ծառայողական անձնակազմի հատուկ ֆիզիկական պատրաստականության, ծառայողա-կիրառական մարզաձևերի տիրապետման հմտության բարձրացումն ու կատարելագործումը և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության համար անվճար մարզադահլիճների, մարզահրապարակների և մարզագույքի տրամադրումը, միաժամանակ անցկացնելով ուսումնամարզական և ուսումնամեթոդական միջոցառումներ: Նրանց մասնակցության ապահովող աշխատանքների կազմակերպումը հանրապետական և միջազգային մարզական միջոցառումներին:

Հանրապետության ազգաբնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, առողջ և ֆիզիկապես ամուր սերնդի պատրաստում, մանկապատանեկան ֆիզդաստերակության և մարմնակրթության կատարելագործմամբ, որը հանդիսանում է նաև իրավախախտումների և հանցագործությունների նախանշման արդյունավետ միջոց: Կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան.

1.1 Սույն պայմանագրով ոստիկանությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 24 464 200 (քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Ուսումնական հաստատությունն իրավունք ունի.

2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում **ծրագրի** իրականացումը, կամ **ծրագրի** իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է **ծրագրով** նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում **ծրագրով** սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ուսումնական կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ուսումնական կողմից գումարները չվճարվելու դեպքում, միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Ուսումնական հաստատությունը պարտավոր է՝

2.3.1. **ծրագրով** նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել **ծրագրի** (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել **ծրագրով** նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է **ծրագրի** և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ուսումնական հաստատությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել **ծրագրի** շրջանակներում ուսումնական կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել **ծրագրով** և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել ուսումնական կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սահմանված կարգով ուսումնական հաստատությանը պարբերաբար ներկայացնել **ծրագրի** իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ: Հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակին հաջորդող ամսում 10 օրվա ընթացքում, իսկ տարեկան

հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու տարվա հաջորդող տարվա հունվարի 15-ը ներառյալ:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ուստիկանության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ուստիկանության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ուստիկանության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Ուստիկանությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է ուստիկանության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Ուստիկանությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը համապատասխան կազմված սույն պայմանագրին կից ժամանակացույցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է ուստիկանությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Ուստիկանությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. <<Պետության կողմից տրամադրվող դրամաշնորհի օգտագործման>> ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ոստիկանություն ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Գ/Հ 900011021947 ՀՎՀՀ 01533334	ՀՀ ոստիկանության <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպություն ք. Երևան,Վարդանանց 69 Հեռ. /010/ 55-23-11 <<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ Հ/Հ 1510004672000100 ՀՎՀՀ 01503826
_____ Վ. Մովսիսյան (ՀՀ ոստիկանության պետի տեղակալ) (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ա. Մկրտչյան (նախագահի առաջին տեղակալ) (ստորագրություն) Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Դրամաշնորհի թիվ 1 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը ՀՀ Ոստիկանություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Խումբ	դաս	ծրագիր	Նախարարություն
03	01	01	10	105019

3. Հիմնարկին սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011021947 ՀՎՀՀ 01533334

Ծրագրի անվանումը՝ ՀՀ ոստիկանության ոլորտի քաղաքականությաան մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018 թ. պետական բյուջեի միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
1	2	3	8	11	14	15
Այլ ընթացիկ գրամաշնորհներ	4639	6116.1	12232.2	18348.2	24464.2	24464.2
Ընդամենը		6116.1	12232.2	18348.2	24464.2	24464.2

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան,Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

Վ. Մովսիսյան
/ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

Կ.Տ.

«____»_____2019թ.

ՀՀ ոստիկանություն
,,Դինամո՝՝մարզական հասարկական կազմակերպություն
ք.Երևան,Վարդանանց 69 հեռ. /10/55-23-11
,,ԱՐԱՐԱՏԲԱՆԿ,,ԲԲԸ
Հ/Հ 1510004672000100
ՀՎՀՀ 01503826

Ա. Մկրտչյան
/նախագահի առաջին տեղակալ/

Կ.Տ.